ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 հունիսի 2023 թվականի N 234 - Ա

«ՊՈՂՈՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԵՐԻՆ ԽՈՏԱՆԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՀԵՐՄԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով և հիմք ընդունելով Հերմինե Պողոսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2023 թվականի հունիսի 22-ից լուծել «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Խաչատուր Բադալյանի հետ 2018 թվականի հունիսի 22-ին կնքված N 15 աշխատանքային պայմանագիրը:

2. 2023 թվականի հունիսի 23-ից «Պողոս Տեր-Դավթյանի անվան Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Հերմինե Պողոսյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

22.06.2023

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ. հունիսի 22
ք. Կապան